Հավելված N 2
ՀՀ կառավարության 2022 թվականի
նոյեմբերի 17-ի N 1747-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԹՎՈՎ 6 ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿՆՔՎՈՂ ԳՈՐԾԱՐՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Գույք նվիրաբերողը	Սյունիքի մարզի Գորիս համայնք
Սեփականության իրավունք ձեռք բերողը (նվիրառու)	«Հայաստան» համահայկական հիմնադրամ
Նվիրաբերման պայմանագրի կնքման ժամկետը	Հողամասը նվիրաբերող մարմնի կողմից որոշումը կայացնելուց հետո 5-օրյա ժամկետում
Հողի սեփականության իրավունքների փոխանցում	Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման պահից
Նվիրաբերման պայմանագրի կնքման և գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարվում են	«Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով:
Կողմերի պարտավորությունները	1. Նվիրաբերողը պարտավորվում է՝ 1) նվիրառուին տրամադրել երրորդ անձանց իրավունքներից, փաստացի տիրապետումից ազատ հողամաս. 2) իր լիազորությունների շրջանակներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նվիրառուին տրամադրել թվով 6 բնակելի տների կառուցման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ բոլոր թույլտվությունները: 2. Նվիրառուն պարտավոր է՝ 1) հողամասն օգտագործել բացառապես բնակելի տների կառուցման նպատակով. 2) ՀՀ քաղաքաշինության կոմիտեի հետ ծրագրի նախնական համաձայնեցմամբ հողամասերում թվով 6 բնակելի տների կառուցապատումներն իրականացնել նվիրաբերման պայմանագիրը կնքելու պահից երեք տարվա ընթացքում. 3) բացառել իր կողմից նվիրաբերման կարգով ձեռք բերված հողամասի օտարումը, գրավադրումը, վարձակալության կամ օգտագործման տրամադրումը.

	4) բնակելի տների կառուցման ավարտից հետո դրանք 10 տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Արցախից տեղահանված թվով 4 և Ներքին Խնձորեսկ գյուղի սոցիալապես անապահով թվով 2 ընտանիքներին: 10-ը տարին լրանալուն պես դրանք անհատույց սեփականության իրավունքով փոխանցել նշված ընտանիքներին:
Կողմերի պատասխանատվությունը	Կողմերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պատասխանատվություն են կրում պայմանագրի պայմանների խախտման համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

17.11.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ